

# Մարզպետը Ծաղկածորում հետևել է սուբվենցիայի շրջանակում իրականացվող աշխատանքների ընթացքին

18.10.2019

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն աշխատանքային այցով Ծաղկածորում էր, որտեղ հետևել է Կառավարության 2019 թվականի սուբվենցիոն ծրագրով համայնքում իրականացվող աշխատանքների ընթացքին:

Մարզպետը նախ ծանոթացել է Մայիսյան փողոցն ընդգրկող ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքների ընթացքին:

Նշենք, որ պետական բյուջեի աջակցությամբ իրականացվում են ներհամայնքային փողոցների հիմնանորոգման և մայթերի լայնացման աշխատանքներ:

Շահած պայմանագրի արժեքը 31.374.100 դրամ է, որից 14.118.345 դրամը (45%) պետական բյուջեի ֆինանսավորման չափն է, իսկ 17.255.755 դրամը (55%)՝ համայնքի:

Այնուհետև Ռոմանոս Պետրոսյանն այցելել է Ծաղկածորի մանկապարտեզ, որտեղ սուբվենցիայի շրջանակում իրականացվում են բակային տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնց ավարտից հետո մանկապարտեզն ունենալու է ընդարձակ բակ՝ մարզասարքերով հագեցած խաղահրապարակով:

Այստեղ ամբողջովին փոխվելու է ջրահեռացման համակարգը, որը երկար տարիներ խնդիր է հանդիսացել ամբողջ համայնքի համար, կառուցվելու են հենապատեր, լայնացվելու են մայթերը:

Ներկայում մանկապարտեզ է հաճախում 74 երեխա:

Շահած այս ծրագրի արժեքը 81.900.000 դրամ է: Ծրագիրն իրականացվում է պետության-համայնք 50% / 50% համաֆինանսավորմամբ:

Հիշեցնենք, որ պետական բյուջեի աջակցությամբ, համայնքների տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված Կառավարության 2019 թվականի սուբվենցիոն ծրագրով Ծաղկածորում նախատեսված է իրականացնել 3 ծրագրեր

- համայնքի փողոցների հիմնանորոգում, մայթերի լայնացում
- մանկապարտեզի բակային տարածքի բարեկարգում
- մանկական արվեստի դպրոցի շենքի կառուցում: